բուհի Մարիամ, որ 'ի ժամու սրածութեան՝ զապաւինեալս առ Քեզ՝ ողորմութեամբդ կեցուցեր. աղօթեա՛ վասն մեր »։

Զ. Դարձեալ երգ առ Որբուհին Մարիամ։ — « Սրբուհի դու, որ ողորմութեանց ես բաշխող, որ զգլորեալ մեղաւորն անդէն կանգնես, առ քեզ համբառնամք զմիտս մեր և զսիրտ, զՔեզ փառաւորեմք. Դու ամուր և վահան Կամենիցի՝ 'ի չորեք հարիւր և աւելի ամաց հետէ. Դու ես պաշտպան և բաղդ համօրէն Քոց ծառայից։ Թշնամիք մեր խոստովան եղեն յայտնապէս՝ զի 'ի տալ մեզ Մարիամու զօգնութիւն, երկիւղիւ իբրև երկաթ կապեցան ալ բազուկք նոցա և խորտակեցաւ արութիւն։ Տեսեալ զՔեզ բոցաճաճանչ՝ ըմբռնեալք մեծաւ երկիւղիւ 'ի փախուստ դարձան թշնամիք, և վարեալք անհնարին տագնապաւ՝ լքին զսրբայ վայր Քոյին։ Ի յարձակել թշնամեաց 'ի վերայ մեր խժդժութեամբ՝ հաւատարիմ ապասաւորք Քոյին փախուցեալ 'ի հալածչաց մտին 'ի նաւ, զՔեզ կրելով 'ի միասին։ Դու քաջապէս պահեցեր զնոսա 'ի Սեաւ ծովուն, ընդդէմ մրրկաց և ալեաց խուռն կուտակելոց. զի նոքա զՔեզ ընդ ինքեանս կրելով, Տիրուհի, անվտանգ զերծան։... Դու գեղեցկութիւն Հայոցս, դանձ անսպառելի՛, պարգևեալ մեզ յերկնից. 'ի Քէն է մեզ ողորմութիւն. դու կարօտելոց օգնութիւն. առ ո՛ որ ձեռք Քո յօգն կարկառիցին՝ նա երկնչի յումեքէ ոչ։ Ղենգութիւն և պատրանք թշնամեաց հալին որպէս մոմ առաջի Քոյոց խորհրդոց։ Հրապոյրք չարին և փորձութիւնք՝ 'ի դիմեն մեր առ Քեզ, 'ի փոշի լուծանին։ Թագուհիդ երկնաւոր, ըստ վաղեմի սովորութեան Քում, իշխեա՛ 'ի վերայ մեր, և կառա-